ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Յունիսի 28-ին Մայր Աթոռ ժամանեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Ս. Օծություն Ալեքսիի պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին Կազանի թեմի Առաջնորդ Գերմոգեն Արքեպիսկոպոսը և Մոսկվայի Հոգևոր ճեմարանի դասախոս՝ դոցենտ Ն. Դոկտուսովը։

Տ. Սահակ ծայրագույն վարդապետի գլխավորությամբ Մայր Աթոռի ամբողջ Միաբանությունը շուրջանտերով զգեստավորված հյուրերին դիմավորեց Տաճարի զանգակատան տակը. ապա հյուրերը հանդիսավորությամբ Տաճար առաջնորդվեցին, ուր Ս. Իշման սեղանի առաջ ռուսերեն լեզվով նրանց բարի գալուստ մաղթեց Տ. Սահակ ծայրագույն վարդապետը։ Դիմելով հյուրերին Ս. Հայրն ասաց.—

— Ձերդ Բարձր Սրբազնություն և թանկագին հյուրեր, ինձ բախտ վիճակվեց Մայր Աթոռի Միաբանության անունից ողջունել Ձեզ այս նշանակալից օրը, հնադարյան մեր այս սրբազան Տաճարի կամարների տակ։ Մայր Աթոռի Միաբանությունը այսօր երջանիկ է զգում իրեն, որ այս սուրբ վայրում, ուր վեհորեն փայլում է Գրիգոր Լուսավորչի հնադարյան սրբավայրը, դիմավորում է Ձեզ, Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի պատվիրակներիդ։

Աղոթում ենք Ամենաբարձրյալին քրիստոնեական եկեղեցիների բարօրության և Սովետական Հայրենիքի բարգավաճման համար։

Մենք միշտ մեր սրտերում անմոռաց կըպահենք Ձեր Ս. Էջմիածին կատարած թանկագին այցելության հետ կապված հիշողությունները։

Բարի գալուստ, մեր թանկագին հյուրեր։

Տ. Սահակ ծայրագույն վարդապետի ողջունից հետո Նորին Սրբազնություն Գերմոգեն Արքեպիսկոպոսը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի անունից ողջույններ և բարեմաղթություններ հաղորդեց Մայր Աթոռի Միաբանությանը։ Իր ողջույնի խոսքն ուղղելով Միաբանության անդամներին Սրբազանն ասաց.—

— Ձերդ Բարձրապատվություն, վարդապետ հայրեր և դուք հոգևոր սպասավորներ Հայաստանի Լուսավորիչ Ս. Գրիգորի նվիրական վանքի, թույլ տվեք Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի անունից Ձեզ ողջույններ ու բարեմաղթություններ հաղորդել Ռուս Ուղղափառ Եկեղեցու քույր Հայ Եկեղեցուն արժանավորությամբ սպասավորելու համար։

Դուք շնորհապարտ գործ եք կատարում, որ կապված է Միածնի Տաճարի, քրիստոնեական կուլտուրայի այս հնադարյան կոթողի, հավերժ պահպանության ու պաշտպանության հետ։

Աղոթում եմ Ամենաբարձրյալին և մաղթում Ձեզ, Սրբազնագույն Գևորգ Զ Կաթողիկոսի իմաստուն ղեկավարությամբ, արժանավոր կերպով վարել Ձեր հոգևոր գործերը ի բարօրություն Քրիստոնեական Եկեղեցու և մեր հանուր Հայրենիքի։

Սրբազանն իր գոհունակությունը հայտնեց նաև իրենց ցույց տրված սիրալիր ընդունելության համար և վերադարձի մոտեցավ ու համբուրեց Ս. Իշման սեղանը։

Այնուհետև հյուրերը հանդիսավորությամբ Վեհարան առաջնորդվեցին, ուր Վեհափառ Հայրապետին ներկայացան Տ. Սահակ ծայրագույն վարդապետի առաջնորդությամբ։

Վեհափառ Հայրապետը հյուրերին սիրալիր ընդունելություն ցույց տվեց։ Նորին Ս. Օծությունը Սրբազան Գերմոգենի հետ ող-

ջաղուրվելուց հետո, ի պատիվ Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսիի, առաջարկեց բաղմել իր կողքը դրված հատուկ բազկաթոռի վրա։

Գերմոգեն Սրբազանը հոնկայս հետաքրքրվեց Վեհափառ Հայրապետի առողջությամբ, և փառաբանեց Աստծուն, որ Վեհափառն իրեն լիակատար առույգ ու առողջ է զգում։ Ալեզարդ Հայրապետը, իր հերթին, հաճեց իմանալ, թե ի՞նչպես է զգում իրեն Համայն Ռուսիոյ Սրբազնագույն Պատրիարքը։ Գերմոգեն Սրբազանից գոհացուցիչ տեղեկություններ ստանալով, Վեհափառը երջանիկ կյանք և արեշատություն մաղթեց Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսիին։

Այնուհետև Գերմոգեն Սրբազանը հայտնեց, որ ինքը երջանիկ է անձամբ Նորին Վեհափառությանը հաղորդելու Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսիի ջերմագին ողջույններն ու սրտանց բարեմաղթությունները, և որ պատվիրակությունը էջմիածին է ժամանել Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի անունից Նորին Ս. Օծությանը Մոսկվա հրավիրելու՝ Ռուսաց Եկեղեցու ինքնուրույնության 500-ամյակի առթիվ սույն թվի հուլիսի 8—20 Մոսկվայում կայանալիք հոբելյանական տոնախմբությանը ներկա գտնվելու համար։ Այս ասելով Սրբազանը Վեհափառին մատուցեց Ալեքսի Պատրիարքի հրավիրագիրը։

Վեհափառ Հայրապետը այս առթիվ իր գոհունակությունը հայտնեց և ցանկացավ, որ պատվիրակության միջոցով նախ Իր անկեղծ բարեմաղթություններն ու սրտաբուխ ողջույնները հաղորդվեն Համայն Ռուսիոյ Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիին, ինչպես և այն մասին ,որ ինքը հաճությամբ ընդունում է Նորին Ս. Օծության հրավերը Ռուսաց քույր Եկեղեցու այդ մեծ ու նշանակալից տոնախմբությանը ներկա գտնվելու առթիվ։

Ապա Վեհափառը և հյուրերը բազմում են իրենց տեղերում. Վեհափառը Ալեքսի Պատրիարքի հրավիրագիրը ընթերցելուց հետո հայտնում է, որ այս հրավերը դիտում է որպես մեծ պատիվ, արված ոչ թե իր անձի, այլ Հայ Եկեղեցու հանդեպ, և որ ինքը կըրկին անգամ հավաստիացնում է պատվիրակությանը այն իր կողմից հաճույքով ընդունելու մասին։

Սրբազանը խնդրում է Վեհափառին պատիվ անել իր հաճությունը դրավոր ևս հաղորդելու Համայն Ռուսիոյ Սրբազնագույն Պատրիարքին։ Վեհափառը խոստանում է հաջորդ օրը կատարել պատվիրակության խնդիրը, որ և կատարում է։

Այնուհետև Վեհափառի և հյուրերի միջև տեղի է ունենում մտերմական խոսակցություն եկեղեցական խնդիրների շուրջը։

Այս պաշտոնական այցելությունից հետո հյուրերը Սահակ ծայրագույն վարդապետի ուղեկցությամբ դիտում են Տաճարը և նրան կից Թանգարանը, ապա այցելում են Հոգևոր Հեմարանը, ուր մանրամասն ծանոթանում են ճեմարանի ուսումնական ծրագրերի, ուսուցման դրվածքի, սաների կենցաղի և այլ խնդիրների հետ։

Ճաշին հյուրերը հրավիրվում են Վեհարան, ուր ընդհանուր ճաշասեղանի շուրջը մտերմական խոսակցությունները շարունակվում են Վեհափառի, հյուրերի և ճաշին ներկա գտնվող միաբանների միջև։

Երեկոյան հյուրերը հաճոյալից տրամադրության տակ հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և մեկնում Երևան։

Հաջորդ օրը հյուրերը ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի աջակցությամբ մեքենայով պտտում են Երևան քաղաքում և ծանոթանում մեր մայրաքաղաքի հախուռն վերելքին ու շինարարությանը. այցելում են Մատենադարանը, որտեղ այցելուների մատյանում իրենց հիացմունքն են արձանագրում։ Հյուրերը այցելում են նաև Արզնի կուրորտը, ուր աշխատակիցները նրանց սիրալիր ընդունելություն են ցույց տալիս. հյուրերն այստեղ հանքային ջրի լողարան ընդունելուց և կուրորտը դիտելուց հետո, շափազանց բարձր գնահատելով բուժման գործի դրվածքը և բուժ-աշխատողների հոգատարությունը, քաղցր տպավորության տակ թողնում են Արզնին։ Հյուրերի վրա մեծ տպավորություն են թողնում մանավանդ Երևանի հոյակապ շինարարությունը, վարդագույն տներով եզերված, ծառազարդ պողոտաները, էլեկտրալույսերով ողողված հրապարակները, փողոցներն ու պուրակները։

Մայիսի 30-ին հյուրերը Երևանից մեկնում են Մոսկվա։